ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՀՀՌՑ-ԷԱՃԱՊՁԲ-19/7» ծածկագրով էլեկտրոնային աճուրդով
Վառելիքի /բենզին ռեգուլյար/ ձեռքբերման գնահատող հանձնաժողովի գնահատման նիստի

ք. Երևան

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 14.02.2019թ. ժամը 15.00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Հ. Սարոյանը
Անդամներ՝	Վ. Ավետիսյանը Ա.Գաբրիելյանը
Հանձնաժողովի քարտուղար՝	Մ. Նիկոլյանը

1. Ընդունել ի գիտություն.

1.1 ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե /Կոմիտե/ 07.02.2019թ. հարցում է ուղարկվել «ՀՀՌՑ-ԷԱՃԱՊՁԲ-19/7» ծածկագրով էլեկտրոնային աճուրդով առաջին տեղը զբաղեցրած «ՄԱՔՍ ՕԻԼ» ՍՊԸ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ:

1.2 Գնահատող հանձնաժողովի 07.02.2019թ. թիվ 2 որոշմամբ, ղեկավարվելով Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով առաջին տեղը զբաղեցրած մասնակից «ՄԱՔՍ ՕԻԼ» ՍՊԸ-ից eauction.armeps.am համակարգով պահանջվել է երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ ներկայացնել Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ սահմանված՝ առաջարկվող ապրանքների անվանումները և տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև Կարգի 61-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթը, նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը /կցվում են/:

2. Հանձնաժողովն արձանագրեց.

2.1 Կարգով սահմանված ժամկետում Կոմիտեից առաջին տեղը զբաղեցրած ՄԱՔՍ ՕԻԼ ՍՊԸ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ ստացվել է դրական տեղեկատվություն /կցվում է/:

2.2 Սույն արձանագրության 1.2 կետով փաստաթղթերը eauction.armeps.am համակարգով սահմանված ժամկետում ներկայացվել է՝ «ՄԱՔՍ ՕԻԼ» ՍՊԸ ընկերության կողմից և համապատասխանում են հրավերով սահմանված պայմաններին /կցվում են/:

3. Հանձնաժողովը որոշեց.

3.1 Հիմք ընդունելով վերոգրյալը ընտրված մասնակից ճանաչել «ՄԱՔՍ ՕԻԼ» ՍՊԸ-ն՝ 1 չափաբաժնով:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0

3.2 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը /կցվում է/:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0

Հանձնաժողովի

նախագահ՝ _____ Հ. Սարոյան

անդամներ՝ _____ Վ. Ավետիսյան

_____ Ա. Գաբրիելյան

քարտուղար՝ _____ Մ. Նիկոլյան